ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

25 հունիսի 2024 թվական, N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 133-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 37-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 2-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 133-Ա որոշման N 1 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 133-Ա որոշման N 1 հավելվածը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			

3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
16.	ՏԻԳՐԱՆ	ՊԱՊՈՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հունիսի 25,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված N 1
Ալավերդի համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 25-ի N 81-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ

ԱԼԱՎԵՐԴԻ 2023Թ

Ծրագրի նկարագրությունը

Ալավերդի խոշորացված համայնքի 28 բնակավայրերից չորսը հանդիսանում են ռոյալթի վճարած կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր: Համայնքի բնակավայրերի ճանապարհների ներկա վատ վիճակը վարորդների համար անհարմարությունների ու ֆինանսական կորուստների պատճառ է դառնում: Դժվարություններ են ստեղծում համայնքի բնակավայրերի բնակիչների տեղաշարժման, գյուղատնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպման, ինչպես նաև շտապ բուժօգնության ավտոմեքենաների արագ տեղաշարժի համար: Բացի այդ, ճանապարհների անմխիթար վիճակը լուրջ դժվարություններ է ստեղծում նաև ենթակառուցվածքների հասանելիության և համայնքային սպասարկում իրականացնող ծառայությունների համար (աղբահանություն, կոմունալ սպասարկում և այլն): Խնդիրն էլ ավելի ցայտուն է դառնում անձրևային եղանակին և ձմեռային պայմաններում, երբ հորդառատ անձրևների կամ ձյան պատճառով հիշյալ ճանապարհները դառնում են գրեթե անանցանելի՝ արդարացիորեն առաջ բերելով բնակիչների դժգոհությունը:

Ներկայիս վիճակը շտկելու նպատակով ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության (համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում) համաձայն, համայնքը նախատեսում է 2024 թվականին ասֆալտապատմամբ կապիտալ վերանորոգել Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի 7-րդ փողոցը (0.44 կմ), 1-ին փողոցը (1,065 կմ), Թեղուտ բնակավայրի 3-րդ փողոցի 1-ին նրբանցքը (0,144 կմ), 2-րդ փողոցի 1-ին փակուղին (0,497 կմ), Շամլուղ բնակավայրի բակային հատվածներ, Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու գետափնյա հատվածը (0,23 կմ), Քարկոփ բնակավայրի 1-ին փողոցը (0.55 կմ), տուֆ քարով սալարկմամաբ վերանորոգել Ճոճկան բնակավայրի 3-րդ փողոցի 2-րդ փակուղին (0,062 կմ) և 20-րդ փողոցը (0,084կմ) ու վերանորոգել Շամլուղ բնակավայրի 208քմ աստիճանավանդակներն և աստիճանահարթակները:

Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի զարգացման խոչընդոտներ և դժվարություններ բաժնում որպես համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտ նշվել է միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ծրագրի նպատակները և արդյունքները

Նպատակ

Ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում.

- ✓ կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը,
- ✓ կնվազեն տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծախսերը,
- ✓ կապահովվի համայնքային նշանակության ենթակառուցվածքների հասանելիությունն ու արդյունավետ շահագործումը:

Ծրագրի շահառուները

Ծրագրի ուղղակի շահառուները համայնքի Ալավերդի, Քարկոփ, Շնող, Թեղուտ, Շամլուղ և Ճոճկան բնակավայրերի թվով 25697 բնակիչներն են, ովքեր կօգտվեն համայնքի բարեկարգ ճանապարհներից և աստիճաններից:

Միաժամանակ, ծրագրի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները, ովքեր ընդգրկված կլինեն ճանապարհների վերանորգման գործում:

Ծրագրի իրականացման գործողությունները և ժամանակացույցը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024թ հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Նախատեսվում է այդ ժամանակահատվածում կազմակերպել Ալավերդի և Քարկոփ բնակավայրերի ճանապարհների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների, դրանց հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացներ, որի արդյունքում մրցույթները հաղթած կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա կվերանորոգվեն 0,146կմ ճանապարհներ՝ տուֆ քարով սալարկման, 2,926 կմ՝ ասֆալատապատման միջոցով ու 208քմ աստիճանավանդակներ և աստիճանահարթակներ:

Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության 04.08.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին» թիվ 1198-Ն որոշման Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետում կկազմվի և կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսեր

Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2024 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը նախնական հաշվարկով կազմում է 246094900 ՀՀ դրամ (նախնական հաշվարկը (ֆինանսական գնահատականը) կցվում է), որը կֆինանսավորվի համայնքային մասհանումների միջոցներից: Այս ծախսերն իրենց մեջ ներառում են Ալավերդի և Քարկոփ բնակավայրերի ճանապարհների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, Ալավերդի, Քարկոփ, Շնող, Թեղուտ, Շամլուղ և Ճոճկան բնակավայրերի ճանապարհների վերանորոգման շինարարական աշխատանքների, հեղինակային ու տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքները:

Շնող, Թեղուտ, Շամլուղ և Ճոճկան բնակավայրերի ճանապարհների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների ծախսերը կֆինանսավորվեն Ալավերդի համայնքի բյուջեից:

Ծրագրի իրականացման հիմքերը

Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման ծրագիրը կազմվել է «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման 2-ր կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության, «Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ Օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Ծրագիրը ներառված է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:

Ծրագրի հնարավոր ռիսկերը

Ծրագրի հնարավոր ռիսկ կարող է հանդիսանալ անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որի պատճառով ծրագրի իրականացումը կարող է անհնարին դառնալ:

Համայնքն ունի համանման ծրագրեր արդյունավետ իրականացնելու տարիների փորձ, ինչը հնարավորություն կտա ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր առաջանալիք խնդիրներն արդյունավետ հաղթահարել:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Ալավերդի համայնքի 2024թ. համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) բխում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից, համայնքի ռազմավարական նշանակության փաստաթղթից՝ ներառված է Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրում: Ծրագիրը բխում է նաև ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ զարգացման ռազմավարությունից, որում ճանապարների որակի բարելավումը նշված է որպես գերակայություն: Ծրագիրը համապատասխանում է համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղություններին և դրանց առաջնահերթություններին:

Ծրագիրն իրականացվում է ազդակիր Շնող, Թեղուտ, Շամլուղ և Ճոճկան բնակավայրերում որտեղ գտնվում են «Թեղուտ» ՓԲԸ-ի հանքավայրերը, «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող պոչամբարները և համայնքի Քարկոփ ու Ալավերդի բնակավայրերում:

Ծրագրով վերանորոգվելիք ճանապարհների ներկա վատ վիճակը վարորդների համար անհարմարությունների ու ֆինանսական կորուստների պատճառ է դառնում: Ճանապարհների անմխիթար վիճակը լուրջ դժվարություններ է ստեղծում նաև շտապ բուժօգնության տեղաշարժի և հասանելիության, ենթակառուցվածքների մատչելիության և համայնքային սպասարկում իրականացնող ծառայությունների համար (աղբահանություն, կոմունալ սպասարկում և այլն): Ուստի Ծրագիրը Ալավերդի համայնքի բնակավայրերի խնդիրների լուծմանն ուղղված առաջնահերթ և կարևոր նշանակություն ունեցող ծրագիր է:

Ծրագրի շահառուները վերոնշյալ բնակավայրերի թվով 25697 բնակիչներն են, այդ թվում՝ ճանապարհների հարակից դպրոցի աշխատակազմն ու աշակերտները:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ)

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Արժեք (հազար դրամ)	Ծանոթություն
1	Ալավերդի համայնքի Շնող, Թեղուտ, Շամլուղ, Քարկոփ, Ալավերդի և Ճոճկան բնակավայրերի ճանապարհների վերանորոգում	246 094,90	
1,1	*Շնող բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*142 814,07*	
1,2	*Թեղուտ բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*29 253,91*	
1,3	*Ճոճկան բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ տուֆ քարով սալարկմամբ*	*9 726,15*	
1,4	*Շամլուղ բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*20 788,15*	
1,5	*Քարկոփ և Ալավերդի բնակավայրերի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*43 512,61*	

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան